

ցեր զմեզ»։ Ապա կը յարէ անոր արգասիքը. «Եւ պարգեւեայ զթողութիւն մեղաց. աճեցոյ զհաւտս եւ զանդեայս եւ զամենայն ինչս եւ ստացուածս ծառայից քոց», եւ այլն։

Գ. Մաշտոցին այդ կանոնին կից կայ նաեւ «Աւրհնութիւն աղի», յիշուած Անձեւացիէն (Հյպտ. 290), Շնորհալիէն (Ընդհ. 160) եւ յայլոց եւս, որոյ թարգմանիչ կը ղնէ Որբելեանն զՍ. Սահակ եւ Մեսրոբ (ՀԿՃ. Ժ)։ Բովանդակութիւնն է սղմ. ԿԶ, ու կարճ աղօթք մը, «Աւրհնեալ ես Տր. Ած. արարիչ», որով կը խնդրուի աստուածային օրհնութիւնն աղին վրայ, «զի յամենայն ինչ յոր եւ խառնեսցի սա, եղիցի մեզ ի սրբութիւն քառութեան եւ ի թողութիւն մեղաց»։ Եւ կը կերցընէին զայն անասնոյն (Ընդհ. 160)։

Շատ հին է սովորութիւնս, զոր արդէն նշմարեցինք Յունաց ու Հրէից մէջ եւս (աստ, 170)։ Ես կը համարիմ՝ թէ մեր հրէականէն առած ենք։ Խորենացւոյն ընծայուած ճառի մը մէջ կը գտնենք յիշատակն «առաքելահրաման նորընծայ պատարագաց աղին օրհնութեան» (Խոր. 336)։ Բայց առաքելականութիւնդ ենթադրական է. այնպէս որ Յհ. Իմաստասէրը Լուսաւորչին կ'ընծայէ օրհնած աղի այս գոր-